# Սովորիր օգտվել Աստվածաշնչից

Բեռնիր այս PDF ֆայլը www.jw.org/hy-armn կայքից

Պողոս առաքյալը հայտնի քրիստոնյա քարոզիչ էր: Ի՞նչն օգնեց նրան անվախորեն խոսելու իր հավատի մասին ուրիշների հետ:

Պողոսը գրեց. «Լավագույնդ արա, որպեսզի քո անձը Աստծու առջև ներկայացնես որպես հավանության արժանացած մեկը, իբրև մի աշխատող, որն ամաչելու ոչ մի պատճառ չունի և *ճշմարտության խոսքը* ուղիղ է մատուցում» (2 Տիմոթեոս 2:15): Պողոսի պես՝ դու էլ կարող ես ճշմարտության խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով քո համոզմունքների մասին խոսել ուրիշների հետ:

Ընտանիքով աչքի անցկացրեք «Աստվածաշնչյան հարցեր ու պատասխաններ» բաժինը jw.org կայքում (տե՛ս ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ > ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ): «Աղոթք» բաժնում ընտրիր մի հարց, որը հավանական է՝ կտան քեզ: Կարդա պատասխանը: Քննարկեք, թե ձեզանից յուրաքանչյուրը Աստվածաշնչից որ համարը կարող է ընթերցել հարցին պատասխանելու համար: Հետո իրար հարցեր ուղղեք և պատասխանեք Աստվածաշնչի օգնությամբ: Այնուհետև առաջին շրջանակում գրիր հարցը, որը թերևս տան քեզ, իսկ մյուսում՝ թե աստվածաշնչյան ո՞ր համարի վրա է հիմնված քո պատասխանը:



▶ **ՓՈՐՁԻՐ ՀԵՏԵՎՅԱԼԸ:** Ավելի շատ բան իմացիր Պողոս առաքյալի մասին: Բեռնիր Պողոսի մասին աստվածաշնչյան քարտը jw.org կայքից (տե՛ս ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ > ԵՐԵԽԱՆԵՐ > ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՔԱՐՏԵՐ): Փորձիր պատասխանել քարտի վրա նշված հարցերին, հետո ստուգիր պատասխաններդ:

www.jw.org © 2013 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania